

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 ձր.

Վեցամսեայ 6 ձր.

ԱՐՏԱՍՈՇՄԱՆ

Երկու քիւր մէկ ծրարով

Տարեկան . . . 14 ձր.

Վեցամսեայ . . . 7 ձր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօյս

Վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Խ Ի Կ

Մանուշեան սողոր
20 սանթիմ



Լ Ր Ա Ք Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՍԵՆ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇՈՒԲ

ՀԱՍՑԻ

Rédaction u journal

„Iraounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

Иравунк“

ВАРНА

Գրութիւնք եւս չեն
տրուիր

ՌՈՒՍ ԿՍՈՒԱԿԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

ԲԵԹԵՐՍՊՈՒՐԿ, 14/26 Մայիս

Ամառն Վէսթիկ կը ծանուցանէ որ նախարարապետ Մ. Կորեմիքին այսօր Տումային մէջ կարգացրէ է իր խոստացած յայտարարութիւնը, որ կառավարութիւնը պատրաստած էր պատասխանելու համար Տումային կայսեր մատուցած ուղերձին պարունակութեանց:

«Կառավարութիւնը՝ ըսաւ Մ. Կորեմիքին, որոյ գործողութիւնը ամենաանաչառ օրինաւորութեան վրայ հիմնուած է, ուղերձին քննութիւնը կատարելէ յետոյ կը յայտնէ թէ ինքը պատրաստ է լիովին աջակցել Տումային, անոր ձեռք առած հարցերուն գործադրութեանը համար, բայց ասի այն պայմանաւ՝ որ այն հարցերը այս ժողովոյ իրաւասութեան սահմանէն անդին չանցնին:

«Կառավարութիւնը նոյնպէս այս աջակցութիւնը պիտի ընէ Տումային ընտրական իրաւունքի փոփոխութեան խնդրոյ մէջ, թէև այն կարծիքն ունի որ այս խնդիրը յարուցանելու ժամանակը չէ եկած, ինչու որ Տուման հազիւ գործի սկսած է և հետեւաբար չէ կրցած տակաւին լաւ մը հասկնալ թէ ընտրական օրինաց անկատարութիւնները որոնք են:

«Կառավարութիւնը մեծ կարեւորութիւն կուտայ Տումայի յարուցած այն հարցերուն՝ որոնք կը վերաբերին դաշտային ժողովուրդի ստիպողական պիտոյից հոգացողութեան, գեղջկականաց միւս ժողովրդային դասակարգերու հետ հաւասարութեան, նախնական ուսումը հարկեցուցիչ ընող օրինաց պարաստութեան, գործաւորական դասակարգի վիճակին լաւացման և նահանգային ու ինքնավար վարչութեան վերակազմութեան:

«Կառավարութիւնը միևնոյն

կարեւորութիւնը կուտայ այն օրինաց ծրագրերուն, որոնք կը վերաբերին անձնական անբռնարարութեան, և հաւատոյ, տպագրութեան ու հասարակային գումարման ազատութեան. սակայն հարկաւոր կը համարի որ վարչութիւնը ունենայ այնպիսի միջոցներ, որոնցմով կարենայ ազատութեան չափազանցութիւնները արգելել:

«Գալով հողատիրական խնդրոյն որոյ լուծումը Տումային կարելի կըրէի ձեռք բերել վանուց և եկեղեցեաց սեփականութիւն եղող կալուածոց բաժանմամբ, և առանձնական ստացուածոց իրենց տէրերու ձեռքէն առնուելով, կառավարութիւնը իրեն պարտականութիւն կը համարի չառնուլ մէկու մը ստացուածքը ուրիշներու տալու համար, վասնզի բովանդակ աշխարհի մէջ ստացուածքի անբռնարարութիւնը ազգի մը բարգաւաճութեան հիմն է համարուած:

«Հողատիրական հարցը կարելի է լուծել Տէրութեան ունեցած միջոցներով առանց հայրենեաց զօրութիւնը չլատելու:

Գալով Տումայի այն առաջարկութեան որ կը վերաբերի նախարարաց պատասխանատուութեան և պետական խորհրդոյ շնչման, կառավարութիւնը չը կրնար ասոնք ընդունել, վասնզի այն ատեն հարկ կըլլայ երկրին հիմնական օրէնքները փոփոխել, և այս բանը ընելն ալ Տումայի իրաւասութեանէն դուրս է:

«Իսկ ինչ որ կը վերաբերի բանակի և նաւատորմի մէջ եղած դատավարական եղանակին, կառավարութիւնը կը յայտնէ որ այս անբեկանելի հիմանց ու եւ է հարուած տալ կարելի չէ, մանաւանդ որ՝ բանակի բարձագոյն պետը (Կայսրը) այս միջոցիս ուղղութիւն է, որ միջոցներ ձեռք առնուին զինուորականաց նիւթական կացութիւնը բարելոքելու համար:

«Գալով բացառիկ օրինաց վերացման, և պաշտօնատարաց ա-

պօրինակութեանց, կառավարութիւնը այնպէս կը դատէ, որ ասոնք տէրութեան վարչային իրաւասութեան պատկանող գործեր են, որոց մասին Տուման մի միայն հարցապնդում ընելու իրաւունք ունի: Այսուամենայնիւ կառավարութիւնը անաչառապէս պիտի հսկէ, որպէսզի ամենախիստ օրինաւորութիւնը պահպանուի:

«Կառավարութիւնը կը ճանաչէ, որ բացառիկ օրէնքները անբաւական են, և զբաղած է աւելի զօրաւոր միջոցներ պատրաստելու, բայց որչափ երկար տեւեն խռովութիւնները, և կառավարութիւնը չունենայ ուրիշ աւելի զօրաւոր միջոցներ գործածելու, բարեկարգութիւնը հաստատուն պիտի պահէ եղած միջոցներով:

«Ներման մասին գալով Մ. Կորեմիքին յայտնեց որ, դատարանաց կողմէ դատապարտեալ անձանց ներում չնորհելը կայսեր իրաւասութեան կը պատկանի: Կառավարութիւնը այն կտրծիքն ունի թէ՛ քանի որ խռովութիւնները շարունակեն եւ չեն դադարի ներումը անկարելի է այնանձանց համար, որոնք մասնակցած են սպաննութեանց և բռնաբարական գործոց:

«Իսկ այլ անձինք, որոց գործած յանցանքը հասարակութեան ապահովութեան չեն վնասել, ազատ պիտի արձակուին:»

«Նախարարաց ժողովը հարկաւոր կը համարի այժմ նախագծել ընդհանուր տեսութեամբ օրէնսդրական շաղին վրայ իր ունեցած դիտաւորութիւնները:

«Ամենէն կարեւոր հարցը, երկրագործական հարցն է, և նախարարաց ժողովը կը խոստովանի որ այս հարցը պէտք է լուծել մասնաւոր խնամքով և խոհականութեամբ:

«Հողատիրական իրաւունքի վրայ ու է նուազում չէ կարելի, այլ պէտք է միջոցներ ձեռք առնել և գիւղականաց վիճակը երկրագործական պանդայի մը օգնութեամբ բարելոքել:

«Կառավարութիւնը կը խոստովանի նոյնպէս, որ ժողովրդեան մտաւորական և բարոյական կըրթութեան ատիճանը խիստ կարեւոր է բարձրացնել, ուստի նախագիծ մը արդէն կը պատրաստէ՝ ընդհանուր ժողովրդեան դատտիրակութեանը և բարձագոյն վարժարանաց և ձեւարանաց բարենորոգմանը համար:

«Կայսեր ծանուցած բարենորոգումներուն գործադրութիւնը անկարելի է, (») ցորչափ օրինաւորութիւնը եւ արդարութիւնը երկրին մէջ չտիրեն:

«Նախարարաց ժողովը շատ կարեւոր կը համարի տեղական դատարանաց հաստատութիւնը, ասոր համար Տումային պիտի մատուցանէ առաջարկ մը հասարակաց պաշտօնէից պատասխանատուութեան վերաբերեալ:

«Բոլոր այս նախագիծը թելադրեալ են այն մտքով՝ ժողովուրդը օրինաց անբռնարարութիւնը չը պիտի հասկնայ, մինչեւ որ գիտնայ թէ օրէնքի բռնաբարութիւնը անկարելի է, նոյնիսկ եթէ աս բանը գործուի իշխանութեան ներկայացուցիչներու և կառավարութեան կողմանէ:»

«Յետոյ առաջին նախարարը Մ. Կորեմիքին ծանուցեց թէ՛ օրինաց առաջարկներ պիտի ըլլան եկամտի և ժառանգութեանց վրայ առնուելու տրոց վերաբերեալ, մի քանի անուղղակի տրոց վերաբնութեան և անցագրերու կանոնաւորութեան համար, Հուսկ ուրեմն ամփոփելով իր խօսքը՝ ըսաւ. «Կառավարութիւնը սա հաստատ համոզումն ունի որ, տէրութեան արտաքին ամրութիւնը և ներքին գործութիւնը, հիմնեալ են գործադիր իշխանութեան օրինաւոր՝ բայց պինդ գործունէութեան վրայ: Այսպիսի գործունէութիւն մը կրնայ

(») Մանթ. Խմբ. Նախարարապետին այս խօսքերը զոր մենք ստորագծած ենք, մեծ նշանակութիւն ունին, եւ բացորոշապէս կը յայտնեն, որ կայսրը ներքէ մտնելով ըրած է իւր խոստումները, եւ ո՛չ անկեղծօրէն ու ազատ կամօք:

անտարակոյս ծնիւ միայն զօրաւոր և ծռել չգիտցող կառավարութեան մը, որ կը ճանաչէ իւր ունեցած պատասխանատուութիւնը զահուսն և երկրին առաջը :

«Նախարարաց ժողովը համոզուած է թէ Տուման գիտէ, որ տէրութեան մը բարգաւաճումը ազատութեան մը բարեկարգութեան պահպանութեան կախում ունի, ուստի պիտի աշխատակցի իրեն հանդարտելու համար երկրին ժողովրդեան խաւերը, վասնզի երկրին յոռաշիւթումը թեանը համար խիստ հարկաւոր է այդ հանդարտութիւնը :

Նախարարաց ժողովոյ ատենապետը իր այս ատենախօսութիւնը աւարտելէ յետոյ այլ և այլ երեսփոխաններ խօսք առնելով կառավարութեան յայտարարութիւնը խտուրտեմբ դատապարտեցին :

Տուման ընդունեց յետոյ գրեթէ միաձայնութեամբ դահլիճին հրաժարումը պահանջող որոշում մը :

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՅ

Ատենէ մը ի վեր Պօլսէն եկած ազգային լրագիրներուն մէջ եռաձայնի ու քառաձայնի խնդիրները մեծ տեղ կը բռնեն. և շատ մը ձայնագէտ դասատուներ իրարու դէմ մրցելու ելած են եռաձայն կամ քառաձայն եղանակներով երգել տալ պատարագը գունդ գունդ մանչ ու աղջիկ տղայոց :

Լրագրաց մէջ գրուածներուն նայելով մեր հասարակութեան նմանը այս եղանակ երգեցողութեան հակառակ են, և այլք ջատագովելով բազմութեամբ կը դիմեն եկեղեցի

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

ՊԱՐԻՊ ԱՒՊԵՐ...

(Շար. նախորդ թիւէն)

Ը

Տարաբաղդ Կարիպ Ախպեր՝ այսպէս առանց ինքզինքը յայտնելու ա՛յն ման. կամարդ կնոջ որ իր ոտքերուն տակ արցունքներ ու հոգեկան քնքեր թափեց, բաժնուեցաւ ու կուսաթան կոչուած լեռներու սէջ մտաւ :

Կէս օրն անցած էր : Ապառաժի մը ներքեւ նստեցաւ ու ծոցէն հանելով նուիրական ծրարը բացաւ զայն ու սկսաւ կարդալ : Նախ, Շիրվանեցի Գարեթի աղայի ձեռքով չինուած ու ստորագրուած անդորրագիրը ծայրէ ի ծայր ալքէ անցուց, որուն մէջ վախառուն բացայայտ կերպով կը խոստովանէր թէ՛ «Ա... գեղացի Ռէս Մուրատ Կարիպնեց անուն անձէն ասկից ետքը բնաւ առնելիք տալիք չունիմ եւ ո՛ր եւ է առկա հաշիւ մը չը կայ ...» : Յետոյ հասնումը մագալաթի պէս թուղթը բացաւ. ահա՛ ինչ

լսելու ախորժանօք :

Այս առաջին անգամը չէ որ մեր ազգային կապիկի նման նորասէր ըլլալով միշտ նորին կը հետեւին ինչ բանի մէջ որ ըլլայ :

Նորասիրութիւնը որ ազգին գլխուն շատ սուղի նստած է երբեմն մասնաւոր պարագայներու մէջ, մի քիչ հասկնալի է մեզ երբ Գրեթէ հագուստի նորաձեւութեանց մէջ կայաւորաւ. բայց եկու տես որ մերոնք անո՞վ չբաւականանալով հազարումէկ նորութիւններ հնարելու և տարածելու ետեւէ են մի անյազ ցանկութեամբ և եռանդով :

Երբ կը յիշեմ թէ մեր ազգայինք ի՞նչ պարզութիւն, ի՞նչ համեստութիւն և ի՞նչ պարկեշտութիւն մը ունէին իրենց կեանքն անցունելու համար ասկէ տակաւին խիստ քիչ ատեններ առաջ. եւ երբ կը տեսնեմ, կը լսեմ ու կը կարդամ անոնց այսօրուայ պարբերական համ. շատ անգամ անվայել և յաճախ ծիծաղելի եղանակները, յիտակը չեմ կրնար ո՛չ զարմանքս եւ ո՛չ զայրոյթս բռնել :

Երբ կըսեմ օգուտ կամ վնաս մեր այս խօսքերու մէջ, չեմ հասկնար զրամական, այլ բարոյական եւ կըրթական օգուտներ կամ վնասներ :

Հաշուենք, ո՛ր մէկ նորաձեւութեան չհետեւեցանք. ունինք հիմայ Հայ Լայֆ մը որոյ գլխաւոր գործերն են, լաւ հագուել, լաւ կերուել միտքով ու շքեղ պարահանդէսներու. մասնակցիլ, թըղթախողելով կամ ոչնչախօսութիւններով ժամանակ անցունել և իրմէն ստորին դասակարգի վրայ արհամարհանօք նայիլ :

Ունինք ընդունելութեանց յատկացեալ օրեր, որոնցմէ դուրս մարդ ընդունիլ չենք ուղիւր :

Ունինք յօրեկաններ տօնողներ, որոնց համար այս տօնը շահու գործ դարձած է :

Ունինք նորասիրուեց երիտասարդներ որ ազգային անունները թողած բոլորովին օտար անուններով եւրոպացեայ հով կը փչեն :

Ունինք վարժուհիներ որ չէնաներու վրայ ելնել գեր կատարիլ բնաւ չեն քաշուիր եւ չեն իսկ երագեր թէ ստով

որ գրուած էր անոր մէջ :

Կ Տ Ա Կ Ա Գ Ի Ր Ս

«Սեւ օրերու պատմութիւնն պիտի գրեմ : Սոսկալի է ասիկա, որովհետեւ ձեռքերու կը զոզան, ուղեղս հալ ու մաշ եղած է ու ալքերս լոյս չ'են տար ինծի :

«Որո՞ւ պիտի գրեմ ... ո՞վ ունիմ այս անողոր աշխարհքի վրայ որ սիրտ ընէ ասիկա կարդալու : Ախ, գիտե՛մ, գիտե՛մ ... մէկը չունիմ, բացի վարսենիկ թոռնիկէս : Ան թո՛ղ կարդայ եւ հասկնայ թէ իր մեծ հայրն ինչպէ՞ս պատճառ եղած է իր հօր աղետալի մահուան եւ թէ ան ի՞նչ պարագաներու տակ ստրկուած է վրայէն հանել սեւ օձու սեւ շապիկն ու տալ իր զաւկին ... :

«Ուրե՛մն, սրտիս հատոր վարսենիկ, դուն դեռ պզտիկ ես ու կը գտնուիս մօրք չուքին տակ : Անոր արցունքներուն դուն ալ կը խառնես քու հոգեւոյդ դառնութեան շաղուած մարգարտի պէս չըթնեցող ու կը հառաչես, երբ որքեւայրի մայրդ հօրդ անունն արտասանէ զոր ճակատագիրը խնց քնէ յաւիտեանպէս :

գէշ օրինակներ տուած կըլլան կրթելու եւ դաստիարակելու համար իրենց խընամոց յանձնուած աշակերտաց :

Եւ հիմայ ա՛յլ ելնել ու եռաձայնի եւ քառաձայնի «ՄՕՏԱՆ» մը ալ մրտցնել մեր եկեղեցւոյ երգեցողութեանց մէջ, չիտակը ա՛յլ այս քոն զասէնը գերազանցեց. պրա՞վօ, այլեւս եկեղեցին թատրոնի վերածելու մի քիչ մնաց, համբերելով կը տնանք :

Խնդճ գաղթականներ. խեղճ Հայաստանցիներ, որ այս տարը տարուան մէջ չկիրցաւ Պատրիարքը գէթ ձեր հայրենիքը մտնելու համար արտօնութիւն ստանալ. նա գործ ունի, նա զբաղած է հոգեւոյ եւ մարմնով եռաձայնի եւ քառաձայնի հաստատել մեր եկեղեցիներուն մէջ, ուր դարեւով երգուած հայկական եղանակները այնքան քաղցր կը լսուէին մեր ականջներուն մէջ եւ գոհ ու ուրախ էինք անով :

Պօլսեցի հայերը այսօր այնպէս կը թուի թէ ամէն ազգին գլխուն եկածները վերջացած լինցած կը համարեն եւ ամեն ինչ հանգստութիւն ու բարիք կը բուրեն. չէ մնացած ուրիշ բան մը ընելու. այլ միայն իրենց հաճոյքը ընելու են :

Երբէք ո՛չ իմ մտքէս եւ ո՛չ մեր հայրենի հարիւրին 99 ին մտքէն կանցնէր, թէ «ՄՕՏԱՆ» ամեն բանի մէջ պտտեցելէ յետոյ, հայը պիտի ելլայ եկեղեցւոյ մէջ ալ մտնելու այդ բանը :

Ինչի՞նչ չստեղծեցինք չը հնարեցինք եւ չօրինակեցինք մինք օտարներէն մեր թեթեւամտութիւններով, առանց մըտածելու թէ պէտք մը կա՞ր ընելու այդ բաները, օգուտ մը կար ազգին խաւերուն մէջ այն սպրդած նորահասութիւններէն թէ վնաս :

«ԻՐԱՒԻՒՆԻ» Ի ԿԱՐԱՆԱԽԱՆԴՆԵՐՈՒ

Տ. Յ. Սրապեան, Ոթիտ. — Ձեր ծանուցման հրատարակութեան առաջ 3 ֆրանք մեզ խրկիւնիդ պէտք է. որովհետեւ սովորութիւն չունինք ապառիկ հրատարակութիւններ ընել :

«Լսէ՛, աղջիկ» :

«Ես այս գեղին մէջ գտնուած բար. ձեր գերադասանքներէն մէկն էի ու տասներկու տարի շարունակ Ռէսուլթեան պաշտօն մը վարեցի : Եղբայր մ'ունէի զոր հոգեւոյս չափ կը պաշտէի : Անիկա իր կնոջ հետ մօտակայ գեղէ մը դարձած պահուն կը հանդիպի չէյ-խի մը, որ երկու ընկերներով կը ճամբորդէ եղբր : Եղբորս կինը շատ անմահ ու գեղանի էր : Անբարոյական չէյխը չը կրնալով իր կիրքը զսպել, եղբորս բացէ ի բաց կը յայտարարէ. կա՛մ կինդ կը յաճնեն ինծի, կա՛մ կ'անքդ : Եղբայրս վախ չուէր ու յաղթանգամ մէկն էր : Բայց նկատի կ'առնէ որ գտնուած տեղը բոլորովին անայն ու արիւնալի տեղ մըն է : Ինչ ընէ, ինչ աղետութեամբ մը կը պատասխանէ թէ կինն իրեն չէ եւ սիրով կընդունի, միայն ինքը հանգիստ թո՛ղ ըլլայ : Գորշիլի Շէյխը ինչո՞ւմէն խելայեղ՝ կը հրամայէ որ քիչ մը նստին ու կ'երուխուծ ընեն : Եղբայրս աղւոր մը խմցունելէ ետքը՝ կը սպաննէ երեքն ալ ու կ'ոչ հետ կը վերադառնայ : Այս աղետալի դէպքը չը յայտնիր նո՛յն իսկ ինծի ալ : Բայց ժամանակ անցնելով

ՆԱԽԱՐԱՐ ԿՕՐԵՍԻՔԻՆ

ԻՆՉ ՏԵՍԱԿ ՄԱՐԴ Է

—*—*—*—

Մի քանի ամիս առաջ, Վիթէ կոմսը մի խմբադրի այցելութիւնը կը դուռնէր : Այս խմբագիրը հարցումներ ընելով իւր հրաժարականի մասին, Վիթէ ծիծաղելով պատասխաններ էր, «Ինծի նայեցէ՛ք թէ զէ՛մքս հիւանդի զէ՛մք է :» Բայց եւ այնպէս Մ. Վիթէ անողջութեան պատճառներ ստաջ բերաւ իր ազատութիւնն ձեռք ձգելու համար : Զարը եւս այս անողջութեան պատճառներն յառաջ բերելով էր որ չնորհեց անոր ազատութիւնը ամենամեծ չողորորդական ակնարկութիւններով : Այս եղանակ հրաժարական տրուելուն եւ ընդունուելուն մէջ ուսական ճգնաժամուն մի գաղտնիքը կար, եւ որոշ միտք մը, որով կայսրը եւ իր խորհրդատուները կուգէին այն ճգնաժամը անցունել եւ անհետ ընել :

Գծուարահանական միայն այս չէր սակայն : Մ. Կօրէմի քիչ անուանումը եւս զօրութիւն էր մեկնել որչափ Մ. Վիթէի պաշտօնէ քաշուիլը : Նախարարութեան ժողովոյ նոր նախարարին համար իր թշնամեաց կողմէ զուրկուած ամեն գէշութեանց հաւատալը քիչ մը վայելուէ չլուրի մեզ : Մնաց որ իր թշնամիներէն ոմանք՝ որք աստորիական թերթերու մէջ յօդուածներ կը հրատարակեն. շատ անգթութեամբ կը խօսին Կօրեմի քիչ համար : Ահա անոնց գրածը :

«Կօրեմի քիչ ուսական դիւանաբանագետի կատարել մէկ քիթն է, «այսինքն» ոչինչ մէկը, ծոյլ մը՝ որոյ «ամենէն պէտքի բանն եղածը միակ «Եր» անձնական հանգստութիւնը վայելել է : Ազնուական ակմբոց մէջ՝ «Կօրեմի քիչ իւր մեծ մէկը, մեծ զուարճացող մը նկատուած է : Կըսեն «նաեւ թէ ազատական է նա, բայց «ազատական այնպիսի ջնջին բանեբրու մէջ որ ո՛չ կօզնեն եւ ո՛չ կը «վնասեն մէկու մը ...»

Վերջապէս, եթէ Վիթէնայի լրագրաց

կերեւի որ խղճահալութիւնը կուտէ անոր սիրտը. հետեւաբար վատ ու ճիւղղ քանակային խոստովանելու կը դիմէ, որ ասկից տասն չորս տարի առաջ պատի մը տակ մնաց ու սատկեցաւ : Այդ եկեղեցականը Տէր Թակոբ կը կոչուէր ու մեր հացով ու ջուրով սնած էր : Խոստովանութեան չորս ամիս ետքը՝ յանկարծ ձերբակալութեան հրաման մը կուգայ ինծի. որ շղթայակալ ընեմ եղբայրս ու քաղաքը լրկեմ : Աւա՛ղ այս ծանր էր ինծի եւ ես չը պիտի կրնայի յանձն առնել ձեռքով մահուան դատապարտել զինքը : Ուստի վճռեցի առժամապէս հեռացունել տունէն : Այդպէս ալ ըրի : Գիշերով Պարսկաստանի ճամբան գրի եղբայրս ու ըսի անոր. — Դնա՛, կինդ ու զաւակներդ Աստուծոյ ու ինծի յանձնուած են : Երբ եղբայրս հեռացաւ, մնաց ինծի գիտնալ թէ կառավարութեան հրամանն ի՞նչ հիման վրայ հաստատուած էր : Ուղղակի եղեւական Ատենի հարցաքննիչ Դատաւորին ներկայացայ ու Ոստիկանապետի այդ խիստ զեկուցազրին նկատմամբ բացատրութիւն մը պահանջեցի : Հարցաքննիչ դատաւորը սեւ երես մ'ինծի ցոյց տուաւ ու գոչեց. — Ո՞վ կըլլաս

ըսածին հաւատ ընծայուի . նիքուլա Բ. Չարը անպիտանագոյն մէկը ընտ- րեի է և Ասոր փոխարէն եղան ուրիշ լրագրի թղթակիցներ եւս, որք նորա- ծին նախարարին արժանիքը շատ զրուատեցին և Այս երկու ծայրահեղու- թեանց որն էր ճշմարիտը, ահա քիչ քիչ հասկցուելու վրայ է :

Մ. Կորմիքին 67 տարեկան մարդ մէ : Սա փայլուն կերպով իր յիշա- լարանական ուսմունքներն աւարտած կառավարական պաշտօնէութեան մէջ մտաւ : Երբ 1863ի ապստամբութենէ յետոյ բոլոնիական ձգտութեանց դէմ մաքառելու համար ռուսաւորուող պաշտօնեաներ խրկուեցան ի Բոլոնիայ, Մ. Կորմիքին, որ ան ատեն 25 տարե- կան էր, անոնց հետ գտնուելով իր պաշտօնէութեան ասպարէզն սկսաւ երկրագործական խնդիրներով զբա- ղիլ եւ մինչեւ 1880 Բոլոնիայ մնաց : Յետոյ ծերակուտական Սէքսպիլին հետ Սարաթով եւ Սամարա գնաց քննական պաշտօնով : Այս առթիւ իր խմբագրած նշանաւոր մի տեղե- կագիրը իրեն շատ նպաստեց : Իսկ Աղէքսանդր Բ. Կայսեր սպանութենէ յետոյ կառավարիչ Սենաթոյին երկ- րորդ բաժնին պետը եղաւ :

1891ին, ըսել է իր 52 տարեկան մէջ, Մ. Կորմիքին կառավարչական դասակարգութեան բարձրագոյն աս- տիճանին հասնելով Արդարութեան նախարարին փոխանորդ կարգուեցաւ, եւ իր այս պաշտօնին մէջ՝ Աղէքս. Գի վերջին օրերը, կարգ մը ոչ-ազա- տական օրինաց պատրաստութեան մասնակցութիւն ունեցաւ : 1894 ին, զկնի գահակալութեան նիքուլա Բ. ի ներքին նախարարութեան փոխա- նորդութիւնն վարեց եւ քիչ ետքը նոյն նախարարութեան գլուխն ան- ցաւ այն Տուրնովոյին տեղ, որ Մ. Վիթէին պաշտօնակիցն ու հակառա- կորդը ըլլալով վերջերս անոր հետ հրաժարական տուաւ ինչպէս յայտնի է : Մեր յիշած ատենը Մ. Վիթէ գանձախի պաշտօնեայ էր : Մ. Կորմի- քին նոր մտած պաշտօնէից ժողովոյ մէջ չկրցաւ լաւ համաձայնութիւն գոյացնել իւր զօրաւոր պաշտօնակ- ցին հետ : Գիւղատնտեսական գործոց մասին իր առաջարկած մէկ ծրագի- րին դէմ Մ. Վիթէ հակադրուելով՝

զուն որ ոստիկանապետի մը հրամանին դէմ բացատրութիւն պահանջելու կու- գաս : Ե՛տ ևս գուրս ելիր . . . արիւնքի տէր վատե՛ր, զե՛տ մարդու պէս խո- սիւս կուզէք ձեզի հետ : Եթէ այս գի- չեր հոս չը յա՛ճնուի եղբայրդ, Եղիւ- նական օրինաց տրամադրութեան հա- մաձայն՝ վաղը փախտական մը պիտի նկատեմ ու պատիժը աւելի ծանր պի- տի դնեմ : Այս յանդիմանութիւնը թէ՛ սպառնական եւ թէ՛ վրէժխնդրական երեւցաւ ինծի : Զը կրցայ հանդուր- ժել, հետեւաբար անկից ելլելով ուղ- ղակի վալի փաշայի ապարանքը դի- մեցի : Ան ատենուան վալին իմ բա- րեկամս էր ու ձայնս լսելի կըլլար : Յայտնեցի անոր զեկուցագրին պա- տասխանի սպառնական ձեւը ու հար- ցաքննիչ դատաւորին անարգանքը : Բարեկամս կարծած վալին իը նենգ աչքերը վրաս սեւեռելով բացգան- չեց . . . Ինծի՛ նայէ, Ռէս Մուրա՛տ, բաւական է ջուռաններուդ վրայ խա- ղալը : Դուն պարզապէս ձայն առած ես մենէ ու այդ ձայնին ուժովը կըտ- րածդ ու կապածդ չես գիտեր : Հար- ցաքննիչը վռնտեց ու անարգեց քեզ . քայց ես կը հրամայեմ՝ բանտարկել, մինչեւ որ եղբայրդ Արդարութեան յանձ-

առաջարկութիւնը չընդունուեցաւ : Սակայն բոլիցիական այն միջոցները որ չարաչար կը գործածէր ռուսական դիւանաբանութիւնը, Կորմիքինի օրով աւելի խստացան : Երբ Մ. Կորմիքին նախարարութենէ հրաժարեցաւ, եւ անոր տեղն անցաւ Սիբիական, այն ատեն յայտնի եղաւ որ Կորմիքին առաջնակարգ անձնաւորութիւն մը չէր, ո՛չ քնտիր քաղաքագէտ եւ ո՛չ ազատական մէկը, ինչպէս հիմայ ցոյց տուաւ Տոււմայի մէջ կարդացած յայտարարութիւնովը :

Զ Ա Ն Ա Զ Ա Ն

ՃԱՌՈՆԻ ԿԱՅՈՐԸ ՄԻՔԱՅՈ ՆԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ Մ. ՇԻՖ ՍԵՂԱՆԱՌԸ

Թօքթոյի մէջ՝ ամերիկացի մեծահա- րուստ սեղանաւոր Մ. Ճագոր Շիֆի Միքատոյի կողմանէ գտած մեծ եւ ան- նման ընդունելութեան վրայ լրագիր- ները երկարօրէն կը գրեն, եւ կըսեն թէ անոր եղած ընդունելութիւնը սա- կէ առաջ երբէք մէկու մը եղած չէր : Մ. Շիֆ մասնաւոր ունկնդրութիւն ունեցած է կայսրէն, Մագոդ-Արեգա- կան պատուանշանը ստացաւ եւ Թօքթո- յի առաջնակարգ սեղանաւորաց հետ ճաշի հրաւիրուեցաւ, եւ այս առաջին անգամն է որ Միքատոն իրեն սեղանը կը նստեցնէ անպաշտօն անձեր : Այս խիստ նշանաւոր ընդունելու- թիւնը կը նկատուի իր կայսեր կող- մանէ Մ. Շիֆին եղած երախտագիտա- կան ցոյց մը, վասնզի անոր սեղանա-ւորական տունն էր՝ որ պատերազմի ժամանակ շրջանական փոխառութիւն- ները հրապարակ հանեց եւ մեծ յաջո- ղութիւններ ունեցան :

ՄԱՏՆՈՒԹԻՒՆ ՄԸ

«ՌԱԶՄԻԿ» ի մէջ կը կարդանք. «Պրանսայէն Յ. Աճէմեան անուն ազ- գային մը՝ հրատարակութեան սահմա- նուած իր մէկ նամակով կը յայտնէ թէ՝ Սիւանիկի վաճառականներէն Թագեոր Բիւսիլիւնան, իր լուսանկարը կառա- վարութեան տանելով մատնութիւններ :

նելու ստիգուիս . . . այսչա՛փ : Հի- մակ տունէս գուրս ելիր : Գլուխս ծռած ու յուսահատ կը քալէի փողո- ցին մէջ, ահա՛ երեք ոստիկաններ վրաս յարձակեցան ու բանտ առաջնոր- դեցին զիս : Բայց երբ իմացան որ եղբայրս փախած էր, անոր կինը մեղ- սակից մը նկատելով բանտարկեցին : Այս բոլոր դարձածքներուն մէջ ո՛չ եղբայրս եւ ո՛չ ալ եղբորս կինը միտք ըրին գիտնալու թէ իրենք զատ զատ Տէր Յակոբ Բահանային խոտու- վանած էին քաղաքացի չէլիսին ու եր- կու թուրքերուն վրայ կատարած ո- ճիւրհին : Ուսկից իմացուած էր, ինչ- պէս ըսի՝ ես ամենէն վերջին պահուն էր որ տեղեկացայ : Գալով կառավա- րութեան՝ յայտնի էր որ կատարեալ ապացոյց մը կար անոր ձեռքը, որով- հետեւ ինծի դէմ եղած այդ անարդա- կան ձեւը ընա՛ւ տեղի ունեցած չէր . . . մանաւանդ եղբորս կինն ալ կը դատա- պարտուէր իրեն մեղսակից մը : Է՛հ, ի՛նչ ընէի . . . ամիսներ սկսան սահիլ : Ահա՛ զիչեք մըն ալ եղբորս չիկնը ծը- նաւ բանտին մէջ : Սպասելը հնար չէր : Միջոցներ փնտոցի : Թուրք կառավա- րութեան սեւ երեսին վրայ ծիծաղ բե- րելու համար գիղիւններ պէտք էին :

ըրած է, երբ ինք՝ Պ. Աճէմեան՝ առեւ- տրական գործով մը ստիպուել է առ- ժամապէս մարսիլիա : Հետեւ անքը ինքնին շատ պարզ է գուշակել. Աճէմ. եանի եւ ուրիշ անմեղ ազգայիններու տուները խուզարկում, խիստ հսկո- ղութիւն, վերադարձի անկարիքութիւն եւ գրիթէ ամբողջ ընտանիքի մը քայ- քայում :

Արդեօք տառապող հայութեան ծո- ցին մէջ ապրող այս զգուելի տիպար- ներուն սեւ շարքը դեռ պիտի երկն- նա՞յ :



ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ԲԱՆՏԱՐԿՈՒՄ
Մարգուանի Ամերիկեան Գոլէճի հայ աշակերտներէ մէկ քանին ձեր- քակալուելով Ամասիա տարուած են, ուր բանաարկուած կը մնան բոլո- րովին անհիմն ու անտեղի կառավա- ձերով : Ամերիկայէն ասոնց ուղղո-ւած նամակները կառավարութիւնը բանալով կարդացեր, եւ «խորհուրդ» բառին յիշատակութեանը դաւադրա- կան նշանակութիւն մը տալով բան- տարկեր է խեղճ պատանիները : Բան- տին մէջ բաւական չարչարանքներ տրուած են անոնց : Գոլէճին Ամերի- կացի քրօֆէսոր միսիօնարներուն մի- ջամտութիւնն ու բարեխօսութիւնն- ները՝ Թիւրք իշխանութեան մօտ՝ ծգուտ մը չեն տուած, եւ հայ պատա- նիները բանտարկուած կը մնան ա- միսներէ ի վեր :



ԺԱՄԱՅՈՐԱՆՈՒՄ

ՅԱԿՈԲ ԹՕՍՊԵՐԵՐԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՎԱՌՆԱ

Բարիզու, Ժընէվի եւ Պուլսէի ցուցահանդէսներուն մէջ մեծագոյն պարգեւներ ստացող ու համաշխարհային գնահատման բարձրագոյնին արժանացող այս ժամա- ցոյցի գործարանը «ՕՄԵԿԱ» իրօք իր անունը արդարացուցած է իր ճարտա- րարութեամբ կատարելագործութեանց վերջին աստիճանին ՕՄԵԿԱ ին հասցնող հաստատութիւն մը :

Այս հոշակաւոր Գործարանին ներկայացուցիչն է Տ. Յակոբ Թօսպերեանի վաղ ճառատունը, ուր կը գտնուին «ՕՄԵԿԱ» ժամացոյցներու բոլոր տեսակները, ոսկեայ, արծաթեայ եւ պողպատեայ ամեն չափէ ու մեծութենէ. ԳիւնեՐԸ ԶԱՓԱՒՈՐ :

Կր գտնուին նաեւ Պուլկարիոյ բոլոր կարեւոր ակնափաճաններու եւ ժամա- գործներու քով :

Ա՛խ, գտաւորէն սկսելով ինչուան կուտակայր, ոստիկանէն սկսելով ին- չուան իր շահամուլ պետը, վերապէս բարձր շրջանակներու վեղիւրներէն ըս- կսելով ինչուան ստորագաս ծառան աղերսներս ու նաեւ զեղին ոսկինե- րըս քաշկոտուեցան . . . Ո՛չ, աջքիո բան մը չէր գար : Ամենր ամեն կին մը ու մէկ հատիկ գաւալիս կը մնային փո- ղոցին մէջ . . . Դայց ես գտնէ՛ կազա- տէի եղբորս կինն ու անոր բանտածին տղեկը : Մախիցի ազաբակս, ծախե- ցի ալգինեսս, ծախեցի երկու ջաղօցք- նիս, ծախեցի իմ անձնական տունս, որ վարձքի տուած էի քաղաքացի հա- րուստ ընտանիքի մը . . . կը մնային քանի կտոր ջրարի տրտերս ու հորե- նական ոճախս : Այս բոլորը կատա- րուած էր մարդու մը ձեռքով որ տա- րիներէ ի վեր սեղանաւորս ու մանրիմ բարեկամս եղած էր : Այդ մարդը կը կոչուէր Շիրվանեցի Գարեղ : Ան էր զիւանաւանց չրջանակներուն գիմոդ ու ոսկիներս անոնց գուռներէն ներս լեցուող : Բայց որքա՛ն. —տախկա Աս- տուած գիտէ : Այսպէս թէ այնպէս, երկուք ու կէս տարի բանտը մնացինք ես ու եղբօս, կինն՝ իր մանուկովը :

կառավարութեան կոկորդը լեցուած էր, հետեւաբար ներում չնորհեցին անոր արդարացատ պաշտօնեաներն ու դա- տաւորներն ինծի՝ իրրիւ մեղսակից եղ- բորս փախուստին ու եղբորս կնոյ՝ իբ- բեւ ոճիրին ներկայ մը ու գործադրող մը . . . Բանտէն ազատուելէն ետքը՝ խեղճ կինը չը կրցաւ ապրիլ, հա- զիւ շարաթ մը պառկեցաւ ու մեռաւ : Թողնելով ինծի երկու չափահաս դա-ւակներն ու բանտածին մանկիկը : Մինչեւ այն ատեն եղբորմէս լուս մը չ'ունէի. անոր կնոյ մահու ընէն եր- կու ամիս ետքը գիչեր մը տունս եկաւ ու առնելով զաւակներն բռաւ. — Ա՛խ, եղբայր, դրամ չունիմ . . . Եթէ կարե- յի է քանի մ'ոսկի տայիր ինծի, Գի- շերով ճամբայ ելայ ու քաղաքը վա- ղեցի : Գուայ Շիրվանեցի Գարեղ Ա- ղան ու քանն ոսկի առիւրմէն, Եղ- բայրս համբուրեց զիս ու բաժնուե- ցաւ : Բայց հազիւ թէ ամիս մըն ալ սահեցաւ, ահա՛ օր մը վախիտուեալ բա- րեկամս ստիպողական յարկի մէ տակ քաղաքը կանչեց զիս : Անմիջապէս գացի :

(Շարունակելի)

Ա Ձ Դ

Կալացի ազգային եկեղեցւոյ հոգա-
բարձր թիւերը խմբագրութեանս նա-
մակ մը գրելով կը խնդրէ ծանուցա-
նել, որ «յաւ քարոյականի տէր քա-
հանայն մը եւ եկեղեցական ամեն
մատակարարութեան հմուտ գպիրի
մը պէտք ունի»
Փափաքողք կրնան յիշեալ հոգա-
բարձրութեան գիմել նամակս :

ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Չէթինէ, 15 մայիս

Ալպանիացիք Պրէսովիցայի մէջ
երկու թուրք զինուոր սպաննե-
ցին : Կուսինիի Քարմազաձը Պրէ-
սովիցայի Սերպերն են անոնց
սպաննիչները, Պրէսովիցա գը-
նաց միջանի զինուորներով եր-
կու օրթոթօքս (գուցէ Սերպ) մեռ-
ցնել տալով անոնց քահանան եւ
գիւղին մի քանի երեւելիները
ալ գանակոծել տուաւ :

Կ. Պօլիս, 15 մայիս

Ապահովագրութեանց նոր օրի-
նաց դէմ եղած գիտողութիւննե-
րը Բ. Գուռը ընդունելու տրամա-
դրութիւն ցուցնելով, դեսպանա-
տանց թարգմանները ի ժողով
գումարուեցան յիշեալ օրէնքը
քննելու եւ հարկ տեսնուած փո-
փոխութիւններն ընելու համար :

ՐՈՒՍԻԱ

Խռովութիւնք կը շարունակեն
անդադար, եւ ատելութիւնը ի
մէջ ժողովրդեան եւ կառավարա-
կան վարչութեանց հետզհետէ կը
աստիկանան :

Ահաւորիկ վերջին հասած հե-
ռագրական տեղեկութիւնները,
որոնք անգամ մը եւ կը հաստա
տեն մեր նախորդ թիւերով ըրած
գիտողութիւնները :

Բեթերսպուրկ, 15 մայիս

«Նովոյէ Վրէմիա» թերթը Պալ-
թիկեան նահանգներէն մտահո-
գութիւն պատճառող լուրեր կը
հրատարակէ :

Այս նահանգաց մէջ տպւած
գերմանական լրագիրները կը
շարունակեն լուրեր հրատարա-
կել պալթիկեան ապստամբնե-
րուն ոճրագործութեանց վրայ
որոնք մահ կուսառնան բաւթու-
ներուն ու կալուածատէրերուն
դէմ :

Գերմանական լրագիրները կը
յայտնեն թէ քրիստոնեայ ժո-
ղովուրդը պատրաստ է ամեն զի-
ջում յանձն առնել, որպէս զի ի
գործ դրուած Տէրօրիստական ե-
ղանակէն ազատի, սակայն եթէ
Բեթերսպուրկի մէջ իրենց խնդ-
րածին ականջ չը կախվի, Պալ-
թերը այնպէս բարձր պիտի ա-
ղաղակեն, որ վերջապէս լսեն ի-
րենց :

Բեթերսպուրկ, 12 մայիս
Կ'ըսեն թէ Ռուս կառավարու-
թիւնը բանագնացութեան մէջ
է Սէնտէլիսոնի հետ անցեալ
տարուան այս սեղանաւորի մի-
ջոցաւ կարճ ժամանակի համար
ըրած փոխառութեան վճարումը
յետաձգելու պայմանները որոշե-
լու համար :

Լոյ 15 մայիս

Չարին եւ Չարուհւոյն թագա-
դրութեան առթիւ տեղի ունե-
ցած զօրահանդէսի ատեն, շատ
մը ուռմբեր նետուեցան սրով
3 հոգի մեռան եւ շատեր վիրա-
ւորեցան :

Ռուսը նետողներէն երկու
հոգի ձերբակալուեցան :

Սելվաստաբոլ 15 մայիս

Երէկ զօրահանդէսի ատեն բեր-
դին հրամանատար Ներիուժէվ
զօրապետին դէմ ոճրագործու-
թիւն մը տեղի ունեցաւ :

Ոչ մէկ սպայ վիրաւորեցաւ,
սակայն վեց քաղաքացիներ մե-
ռան, եւ 14 հոգի ծանրապէս վի-
րաւորեցան, ուրիշ 40 քողաքա-
ցիներ եւ թիթե կերպով վէրք
ստացան :

Չորս յանցաւորներ ձերբակա-
լեցան :

Թիֆլիզ 15 մայիս

Կովկասեան ընդհանուր կառա-
վարիչը ոստիկանապետին հետ
կառքով անցած ատենը, կառքին
դէմ ուռմբ մը նետուեցաւ, սա-
կայն երկուքն ալ անվնաս ազա-
տեցան : Միայն կողակ մը զար-
նուելով մեռաւ :

Պրաշով 13 մայիս

Ամաց գիւղը որ 478 կաթուղիկ
Ռումէնէն 358 Մաճար բնակիչ ունի
ու Սաթմար քաղաքէ շատ հե-
ռու չէ, սոսկալի ջարդեր տեղի
ունեցան : 29 Մաճարներ որ ի
րենց ընտրելոյն աւելի քուէ
վաստիելուն համար հարբեր էին
գիշեր ատեն Ռումէն բնակիչնե-
րուն վրայ յարձակելով կացիւնի
եւ գանակի հարուածներով ա-
նոնցմէ տասը հոգի սպաննեցին
եւ վիրաւորեցին շատերը որոց
մէջ կը գտնուէին նաեւ կանայք
եւ տղայք :

Մարդասպանները ձերբակալ-
ուելով բանտարկուեցան :

ՆԵՐՔԻՆ

Սօֆիայէն եւրոպական թեր-
թերու քաջուած հեռագրի մը
նայելով Ն. Ա. Բ. Ֆէրտինանտ իշ-
խանը Ռուսիայ նախկին արտա-
քին գործոց նախարարին մտեր-
մական հեռագիր մը ուղղելով
իր եւ պուլկարիոյ իշխանութեան
երախտագիտութիւնը յայտնե-
ր է, անոր ըրած բարեսէր պաշտ-
պանութեան համար : Լամստօրֆ
կոմսը շնորհակալ եղեր է իշխա-

նին եւ պուլկարական կառավա-
րութեան :

Ռուսաստանի միջավայրե-
րու մէջ բաւական զարմանք
պատճառեց, որ ոչ իշխանը, ոչ
կառավարութիւնը եւ ոչ իսկ
Սօֆիանիէյի գիւնը չնորհաւո-
րական հեռագիր մը չի խրկե-
ցին Չարին կամ Տուժային Ռու-
սական առաջին ազգային ժողո-
վոյ բացման առթիւ, որ պուլ-
կարիոյ մէջ մեծ համակրութեան
մը առարկայ եղած է :

ՎԱՌՆԱՅԻ ՔԱՐԱՓԻՆ ԲԱՅՈՒՄԸ

Ինչպէս ծանուցինք մեր նա-
խընթաց թուով, Հինգշաբթի օր
տեղի ունեցաւ վառնայի նաւա-
հանգստին պաշտօնական բացման
հանդէսը :

Այս հանդէսին ներկայ գըտ-
նուելու համար եկած էին մի օր
առաջ Կ. Պօլսէն Աւստրիական,
Ֆրանսական, Անգլիական, Գեր-
մանական եւ իտալական դեսպա-
նութեանց պահակաւաւերը, Ռու-
սիայէն մեծ զրահաւոր մը եւ Ռու-
մանիյէն Էլիզաւէթա յաճանաւը
եւ Նալոչքա ու Ըսպօռալ թորփի-
լանաւերը, որոնց ներկայութիւնը
եւ գոյնզգոյն դրօշակներով զար-
դարուած լաւ փայլ մը տուին
հանդէսին :

Յատուկ կառախումբով եկած
էին նոյնպէս Սօֆիայէն օտար
տէրութեանց բոլոր ներկայա-
ցուցիչներն եւ թուրք կառավա-
րութեան Բոմիսէր փաշան :

Քարափին ձախ կողմը օր ա-
ռաջ շքեղապէս զարդարուն մեծ
տաղաւար մը կառուցուած էր
հանգիստակատարութեանց եւ պաշ-
տօնական անձանց ընդունելու-
թեան համար : Ի նկատի ունե-
նալով առաջին օրերու եկած հե-
ղեղանման անձրեւները, իբր նա-
խազգուշութիւն տաղաւարին վը-
րայ մօմընորով ծածկուած էր
ներսը անձրեւէ զերծ պահելու
համար :

Ժամը 9 ին ֆէրտինանտ իշխա-
նը էքսիւսկրատի դղեակէն ելլե-
լով մտաւ Նատէժտա յաճանաւը
որ անմիջապէս դէպի նաւահան-
գիստ սկսաւ առաջանալ, Նատէժ-
տա հասնելով նաւահանգիստը
իշխանը իր տղաքներով ցամաք
եկաւ եւ իւր հիւրերուն հետ տա-
ղաւար մտաւ : Պաշտօնական ներ-
կայացումներէ, ճառախօսութիւն-
ներէ եւ կրօնական մաղթանքնե-
րէ յետոյ, փառաւոր սեղան մը
պատրաստուած ըլլալով հաղիւ իշ-
խանը եւ հիւրերը ճաշելու սկսած
էին որ տաղաւարի մէջ կախուած
լամբարէն եկած բոցէ մը տաղա-
ւարը ծածկող մօմընորը բռնկե-
լով ամեն ինչ տակնուվրայ եղաւ
եւ տաղաւարն ամբողջ ալքեցաւ :

Իսկ իշխանը եւ իւր հիւրերը
Տայլէվանթի Ստանպուր չոգենա-
ւը ըրին իրենց ճաշը : Այս հըր-
դէհը խանգարեց ամեն ինչ :

Ա Ձ Դ

Տօքթ. Թագաւորեան ընտանիքը
պատիւ ունի աղագարարել Սօֆիա-
յի մէջ իրեն ծանօթ ընտանիք-
ներուն թէ՛ հիւր կրնայ ընդու-
նիլ այսուհետեւ մի միայն հինգ-
շաբթի օրերը կէսօրէն վերջ ժա-
մը 3—5 :

Ա Ձ Դ

Տօքթ. Թորոսեան տեղափոխելով
իւր բնակարանը Ուլիցա Տրօկման,
թիւ 58, կրթական Տեսչի պաշտօնա-
տան վարի յարկը, պատիւ ունի ծա-
նուցանել յարգոյ հասարակութեան թէ
ինչպէս առաջ նոյնպէս եւ միշտ կըն-
դուեն ամեն տեսակ հիւանդներ առա-
ւօտները ժամը 9-էն մինչեւ 11. Իսկ
կէսօրէ վերջ 3-էն մինչեւ 4 ք :

Այս առթիւ Տօքթօրը կը խնդրէ նա-
եւ ամեն անոնց՝ որոնք իբր աղքատ
ձրիաբար դարձանուիլ կը փափաքին,
հաճին այցելել իրեն միմիայն կիրա-
կի օրերը կէսօրէն ետքը :

ԼՈՒԾԻՆ ՏԱԿ

ՊՈՒԼԿԱՐ ԱՊՍՏԱՄԲԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ

Այս շատ գեղեցիկ հատոր մըն է
թէ պարունակութեամբ եւ թէ կազ-
մով. գինն է 5 Քր. գիմել « Չայն-
Հայրենեաց » խմբագրութեան :

ԹԻԻՃՃԱՐԻՅԷ

ՎԱՌՆԱ, 20 Մայիս
ՉԱԽԻՐԷ

ՊՈՒԼՏԱՅ

Վալսոն	54-60 լիպ.	9.30/ 10. 40
Արապա	52-62 լիպ.	9. /11. 20
ԱՐԲԱ,		
Վալսոն 100 քիւ		11.50/12.
Արապա	42-47 լիպ.	7.60/ 8.
ԵՈՒԼԱՅ արապա	33/36 լպ.	4. 40/5.
ՖԱՍՈՒԼԵԱ արապա	հօգ	— 12.26
ՌԱԲԻՑԱ	100	
Արապա	100 քիւ	7.80/8.
ՏԱՐԸ արապա		— 10/11. 20
ՔՕԼՕՁ արապա	55-60 լպ.	11.12.
ՄԻՍԻՐ 57-58 լպ.	առապա	7. /7.40
»	100 քիւ	10.20 /10.40
ՉԱՎՏԱՐ արապա	հօգ	
»	100 քիւ	1.250/13.
Կիւնտէ	2—3 վալսոն	վէ 8—10
արապա կէլմէքտէ	վալսոն մուամէ-	
լէսի նաբօլէօն 20 Քր.	արապա մու-	
ամէլէսի նաբօլէօն 20.	20	

ՊԱԳԱԼԻՅԷ

Վարնա	բխացաւորտա	պագգալիյէ
մալլէրին	պու կիւնքի ֆիյաթը,	ալթուն
Ֆրանք	իւլէ	
ԳԱՀՎԷ		2.10/ 2.25
Շէֆէր	նէմցէ	.81
Շէֆէր	քէսմէ	սանտրդ 41.
Բիրինձ	ձէնօվա չուվալը	42.
»	Ֆիլիպէ	» 36.—36/35
»	Իսկիւիդ	» 29. 50
Րիզօ	»	49.
ԿԱՁ Սանտրդը		10. 40
Չէթին	եաղը քիւ	90—1.
ԳՈՒՐՈՒ Էւզիւմ		25—25/35
Եուսուրթա	100 առէթի	4. 60

Одговорникъ А. Курбетянъ
лѣп цѣнат а Д. Тодоровъ и С-ко—Варна